Արձանագրություն N 4

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/23Շ ծածկագրով ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

«06» «օգոստոս» 2021թ.
ժամը՝ 15:00

ք. Երևան

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Դ. Արմաղանյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա. Վարդանյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ս. Պետրոսյան
3.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է. Ֆրանգուլյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա. Բաբուջյան
5.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ. Զաքարյան
6.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Ի. Օսիպյան

1. **ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/23Շ ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը**

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/23Շ** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2021 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը՝ 15:00-ին:**

1.2 Ներկայացված աշխատանքների նախահաշվային գինը՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Հ-8, /Մ-2/-Այնթապ-Մխչյան-Արտաշատ-Այգևան-/Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+200-կմ 26+400 և կմ30+000-կմ33+500 հատվածների հիմնանորոգման աշխատանքներ	2 126 381 298

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում**

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

N	Մասնակիցների անվանումները	Էլ. փոստ
1	Արհովշին ՍՊԸ	arhovshin.llc@mail.ru
2	Լեոպոլդ և ընկերներ ՍՊԸ	leopoldevllc@gmail.com
3	ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ ՍՊԸ	araratchanshin@mail.ru
4	ԵՎՐՈԱՍՖԱԼՏ ՓԲԸ	karlensimonyan@gmail.com
5	Կապավոր ՍՊԸ	info@kapavor.am
6	ՄՈՍՏՈՎԻԿ ՍՊԸ	mostovikltd@gmail.com

3. **Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

4.1 Հանձնաձողովն արձանագրեց, որ՝

1. **ԵՎՐՈԱՍՖԱԼՏ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝**
   - Չափաբաժին 1-ի մասով լրացված և հաստատված ծավալաթերթ-նախահաշվի XI բաժնի / Դիտահորերի նորոգում/ 1-ին տողի / Դիտահորերի նորոգման միաձույլ բետոն B20/ քանակը հրավերով սահմանված է 3,24 մ3, սակայն հայտով ներկայացված լրացված ծավալաթերթ-նախահաշվում նշված է 3,324 մ3, ինչի հետևանքով խախտվել է բաժնի ընդհանուր գումարն ու ծավալաթերթ-նախահաշվի արժեքը:
2. **Կապավոր ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝**
   - Չափաբաժին 1-ի մասով լրացված և հաստատված ծավալաթերթ-նախահաշվի XIII բաժնի / Ե/բ խողովակների և մետաղական խողովակների, փոքր կամուրջների վերանորոգում / Կմ2+600,0, 1x1,6մ ե/բ կամուրջ, 2-րդ տողի /Մուտքի գոյություն ունեցող տուֆե գլխադիրի կազմատում պնևմագործիքով, բարձում ավտոինքնաթափ/ քանակը հրավերով սահմանված է 0,1 մ3, սակայն հայտով ներկայացված լրացված ծավալաթերթ-նախահաշվում նշված է 0,2 մ3, ինչի հետևանքով խախտվել է բաժնի ընդհանուր գումարն ու ծավալաթերթ-նախահաշվի արժեքը:

5. Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակիցներին, ում հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 2-րդ ենթակետը մերժել **ՄՈՍՏՈՎԻԿ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը:

6. ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/23Շ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանություն շտկման վերաբերյալ տեղեկություններ

6.1 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

7. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

Հ-8, /Մ-2/-Այնթապ-Մխչյան-Արտաշատ-Այգևան-/Մ-2/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ21+200-կմ 26+400 և կմ30+000-կմ33+500 հատվածների հիմնանորոգման աշխատանքներ				
Հ/Հ	Մասնակից	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր Գին
1	Արհովշին ՍՊԸ	1,788,000,000.0	357,600,000.0	2,145,600,000
2	Լեոպոլդ և ընկերներ ՍՊԸ	1,815,000,000.0	363,000,000.0	2,178,000,000
3	ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ ՍՊԸ	1,783,027,500.0	356,605,500.0	2,139,633,000
4	ԵՎՐՈԱՍՖԱԼՏ ՓԲԸ	1,763,327,700.8	352,665,540.2	2,115,993,241
5	Կապավոր ՍՊԸ	1,767,000,000.0	353,400,000.0	2,120,400,000
	ՄՈՍՏՈՎԻԿ ՍՊԸ	1,771,984,416.66	354,396,883.34	2,126,381,300

8. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

8.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ և հրավերի փոփոխություններ.

2021 թվականի հուլիսի 9-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ **2021 թվականի հուլիսի 12-ին** տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1.

Հարգելի գնահատող հանձնաժողով

Հ-8/Մ-2/ - Այնթափ – Մխչյան – Արտաշատ – Այգևան - /Մ2/ հանրապետական նշանակության ա/ճ-ի կմ21+200 – կմ26+400 և կմ30+000 – կմ33+500 հատվածների հիմնանորոգման աշխատանքների վերաբերյալ խնդրում ենք տալ հետևյալ հարցերի պարզաբանումները՝

1. Նախագծով նախատեսված է երկու վերը նշված հատվածներում կատարել 34վ IIկ. Բնահողի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ. կուտակումով, բարձում էքսկավատորով ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 5.0կմ:

Այդ հատվածները ասֆալտապատ են նախկինում իրականացված խճային հիմքի վրա, որը տոգորված է եղել բիտումով և մեր խորին համոզմամբ ծավալաթերթ – նախահաշվով տրված բնահողի կատեգորիան չի համապատասխանում իրականությանը:

2. Որտեղ՞ պետք է տեղադրվի քանդվող ա/բետոնի ծածկը՝ հաշվի առնելով, որ ա/բետոնի թափոնները համարվում են խիստ վտանգավոր նյութ և համայնքները հրաժարվում են հատկացնել թափոնատեղի:

3. Կմ30+000 – կմ30+800 հատվածում (Նոր-Կյանք) պետք է շարունակվի խմելու ջրագիծը d=110մմ պ/է խողովակներով: Նախագծով դրա վերաբերյալ ոչինչ նախատեսված չի:

4. Ծավալաթերթ – նախահաշվի կմ21+200 – կմ26+400 XIII գլխի կմ3+700 1*1.16 ե/բ կամրջի նորոգման աշխատանքների 3-րդ կետում նշված է տեղափոխում լցակույտ 5կմ հեռավորության վրա, սակայն նշված չի ինչին է վերաբերվում և մշակման ձևը (էքսկավատորով թ՞ե ձեռքով): Նույն սխալը կա կմ30+000 – կմ33+500 I գլխի 3-րդ կետում:

5. Ծավալաթերթ – նախահաշվի կմ30+000 – կմ33+500-ի IX գլխում նշված է մետաղական խողովակների տեղադրում, որը պետք է փոխարինվի դիտահորերի նորոգում բառակապակցությամբ:

Պարզաբանում N 1.

Հ-8/Մ-2/ - Այնթափ – Մխչյան – Արտաշատ – Այգևան - /Մ2/ հանրապետական նշանակության ա/ճ-ի կմ21+200 – կմ26+400 և կմ30+000 – կմ33+500 հատվածների հիմնանորոգման մրցույթային հրավերի վերաբերյալ գնահատող հանձնաժողովին ուղղված հարցադրումներին նախագծող կազմակերպության կողմից ներկայացվել են հետևյալ պարզաբանումները.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը ,որ ճանապարհի ծածկը հիմնականում քայքայված է այդ պատճառով ծածկի գրունտի առանձնացում ընդհանուր հողայինի ծավալից չի կատարվել, սակայն անհրաժեշտության դեպքում շինարարության ժամանակ կկատարվի հավելյալ ուսումնասիրություն և կկատարվի գրունտի կարգի շտկում:

2. Աղբավայրերի տեղերը նշված են ճարտարապետահատակագծային առաջադրանքի մեջ, որը հաստատված տրամադրվել է համայնքի ղեկավարի կողմից:

3. Տեխնիկական առաջադրանքում ջրագծի նախագծման պահանջ չի եղել:

4. Նախագծողի կողմից պարզաբանվել է, որ Ծավալաթերթ – նախահաշվում տեղ են գտել տեխնիկական վրիպակներ: որոնոնց մասով կկատարվել է համապատասխան շտկումներ:

5 Նախագծողի կողմից պարզաբանվել է, որ Ծավալաթերթ – նախահաշվում տեղ է գտել տեխնիկական վրիպակ: որի մասով կկատարվել է համապատասխան շտկումներ:

Ծավալաթերթ – նախահաշվում տեղ գտած վրիպակների շտկման համար գնման հրավերում կկատարվի համապատասխան ուղղումներ:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 12-ի թիվ 2 որոշմամբ հրավերում կատարվել է փոփոխություն.

Փոփոխության առաջացման պատճառ N 1: սույն հրավերով ներկայացված չափաբաժին 1-ի մասով Հավելված 1-ի ծավալաթերթ-նախահաշիվը Պատասխանատու ստորաբաժանման որոշման համաձայն շարադրվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության նկարագրություն: սույն հրավերով ներկայացված չափաբաժին 1-ի մասով Հավելված 1-ի ծավալաթերթ-նախահաշիվը Պատասխանատու ստորաբաժանման որոշման համաձայն շարադրվել է նոր խմբագրությամբ (Կից՝ Հավելված 1):

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

9. Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը մերժել ՄՈՍՏՈՎԻԿ ՍՊԸ -ի հայտը:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա հանձնաժողովի նիստը կասեցնել, էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակցին 12.08.2021թ. ժամը՝ 11:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Դ. Արմաղանյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ա. Վարդանյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Ս. Պետրոսյան
3"Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Է. Ֆրանգուլյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Ա. Բաբուջյան
5.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Լ. Զաքարյան
6.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Ի. Օսիպյան